

## Արձանագրություն թիվ 1

Գավառի պետական համալսարանի 2018 թվականի հունվարի 24-ի ռեկտորատի նիստի

### Օրակարգ

1. 2018թ. առաջին կիսամյակի ուսումնական գործընթացը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում
2. 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի կազմակերպումը ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում
3. 2018-2019 ուսումնական տարվա ԳՊՀ մագիստրատուրայի ընդունելության հայտի նախապատրաստման մասին
4. ԳՊՀ ֆակուլտետների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ինքնավերլուծության և գործունեության հաշվետվությունների ներկայացման մասին
5. ԳՊՀ ներքին և արտաքին շահառուների շրջանում անցկացվող հարցումների հարցաթերթիկների վերանայման հարցը
6. ԳՊՀ-ում սովորող օտարերկրյա քաղաքացիների մասին տեղեկատվություն ներկայացնելու մասին
7. 2018թ. ընթացքում ԳՊՀ-ում ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների շարք կազմակերպելու մասին
8. ԳՊՀ ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
9. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ռեկտորատի 14 անդամներ:

1. **Լսեցին** - 2018թ. առաջին կիսամյակի ուսումնական գործընթացը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում:  
/Զեկ.՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեցին ՀՈՒՖ ուսանողների հաճախելիության, ուսանողների ստուգման գրքույկների և անցագրային քարտերի տրամադրման, սահմանված ժամանակացույցով դասերի անխափան անցկացման նպատակով իրականացվող աշխատանքները:

2. **Լսեցին** - 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի կազմակերպումը ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում:  
/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին սահմանված ժամանակացույցով անցկացված քննությունները, ուսանողների առաջադիմության արդյունքները:

3. **Լսեցին** - 2018-2019 ուսումնական տարվա ԳՊՀ մագիստրատուրայի ընդունելության հայտի նախապատրաստման մասին:  
/Զեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Նշվեց, որ ըստ մասնագիտությունների՝ ձևավորել են մագիստրատուրայի տեղերը, և արդյունքները կներկայացվեն քննարկմանը:

4. **Լսեցին** - ԳՊՀ ֆակուլտետների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ինքնավերլուծության և գործունեության հաշվետվությունների ներկայացման մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ/

Ներկայացվեցին ինքնավերլուծության ուղղությամբ իրականացված աշխատանքների ընթացքը և քննարկվեցին որոշ նկատառումներ:

5. **Լսեցին** - ԳՊՀ ներքին և արտաքին շահառուների շրջանում անցկացվող հարցումների հարցաթերթիկների վերանայման հարցը:

/Զեկ.՝ որակի ապահովման բաժնի վարիչ Ա. Տ. Մայիլյան/

Ներկայացվեցին ներքին և արտաքին շահառուների շրջանում անցկացվող հարցումների հարցաթերթիկների վերանայման վերաբերյալ կառուցվածքային ստորաբաժանումների դիտարկումներն ընդհանրացված ձևով:

6. **Լսեցին** - ԳՊՀ-ում սովորող օտարերկրյա քաղաքացիների մասին տեղեկատվություն ներկայացնելու մասին:

/Զեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Քննարկվեցին սովորող օտարերկրյա քաղաքացիների մասին որոշ մանրամասներ և իմի բերված տեղեկատվության ներկայացման վերջնաժամկետը սահմանվեց մինչև ս.թ. փետրվարի 1-ը:

7. **Լսեցին** - 2018թ. ընթացքում ԳՊՀ-ում ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների շարք կազմակերպելու մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Նշվեց, որ ի պատասխան ԿԳ նախարարի գրության՝ ուղարկվել է ԳՊՀ-ում ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների ցանկը, և հանձնարարվեց՝ նշված միջոցառումները ներգրավել 2-րդ կիսամյակի գործողությունների պլանում և ի կատարումն ընդունել մինչև ս.թ. հուլիսի 5-ը՝ ներառյալ:

8. **Լսեցին** - ԳՊՀ ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ուսման վարձի խնդիր ունեցող ուսանողների հետ տարվող աշխատանքները:

9. **Լսեցին** - Ընթացիկ հարցեր:

9.1 ԳՊՀ հոգաբարձուների նիստի անցկացման մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Նշվեց, որ ս.թ. հունվարի 27-ին, ժամը 12<sup>00</sup>-ին ԳՊՀ նիստերի դահլիճում տեղի կունենա ամենամյա հերթական ԳՊՀ հոգաբարձուների նիստը: Նշվեց նաև, որ «ԳՊՀ կանոնադրության», «ԳՊՀ հիմնադրամի կանոնադրության» և «ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգ»-ի համաձայն կազմվել է օրակարգը և սահմանված կարգով այն հղվել է Հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամներին:

9.2 ԳՊՀ հիմնադիր Հ. Հակոբյանի կիսանդրու տեղադրման մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Նշվեց, որ որ ս.թ. հունվարի 29-ին, ժամը 12<sup>00</sup>-ին ԵՊՀ-ի Աստվածաբանության ֆակուլտետում տեղի կունենա ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հ. Հակոբյանի կիսանդրու տեղադրում և լսարանի անվանակոչություն՝ ի պատիվ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, վաստակավոր մանկավարժ Հ. Հակոբյանի:

9.3 Ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման մասին:

/Զեկ.՝ Արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Ա. Միրիբյան/

Նշվեց, որ Հայաստանի Երիտասարդական հիմնադրամը և «ԱՄՔՈՐ» բարեգործական հիմնադրամը «Արեգակ» վարկային կազմակերպության հետ համատեղ իրականացնում են 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի համար բակալավրիատի առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման ծրագրեր:

Ներկայացվեցին ծրագրերի պահանջներն ու պայմանները, փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետները:

### **Որոշեցին.**

1. ՀՈՒՏ ուսանողներին տեղեկացնել բացակայությունների հետևանքով տրվող վարչական տույժերի մասին.
2. Դասընթացները վարել ինտերակտիվ կերպով.
3. ԳՊՀ ներքին և արտաքին շահառուների շրջանում անցկացվող հարցումների հարցաթերթիկների վերանայման գործընթացում ներգրավել նաև ուսանողների.
4. Ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել ուսանողներին, ինչպես նաև տեղակայել ԳՊՀ-ի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Ն. Ա. Միրիբյան